Asian Development Bank
Armenia Resident Mission
Ասիական զարգացման բանկ
Մշտական առաքելություն Հայաստանում

Ref:ARRM 0229-23
դեկտեմբերի 11 2023թ.

Պարոն Վահե Հովհաննիսյանին

Նախարար/Կառավարիչ

Ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան 1,

Երեւան, 0010, Հայաստան

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

**Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր»**

**- Վարկի փակման ամսաթվի երրորդ երկարաձգում եւ վարկային միջոցների վերաբաշխում**

Հղում կատարելով Ֆինանսների նախարարության 2023 թվականի նոյեմբերի 7-ի գրությանը՝ ուրախ ենք Ձեզ տեղեկացնել, որ ԱԶԲ-ն հաստատում է՝ i) Վարկի փակման ամսաթվի երրորդ երկարաձգումը՝ 2023թ դեկտեմբերի 31-ից մինչեւ

2024թ. օգոստոսի 31-ը, եւ ii) «Չբաշխված գումարներ»-4-րդ բաղադրիչից 2,850,000 եվրո գումարի վերաբաշխումը հետեւյալ կարգով. 2,500,000 եվրո՝ «Աշխատանքներ եւ խորհրդատվական ծառայություններ»-1-ին կատեգորիային եւ 350,000 եվրո՝ «Ավելացող վարչական ծախսեր»-2-րդ կատեգորիային: Հատկացումների վերանայված աղյուսակը ներկայացված է կից հավելվածում:

Մենք շնորհակալություն ենք հայտնում կառավարությանը՝ ծրագրի հաջող կատարման ապահովմանն ուղղված իր ջանքերի համար:

Հարգանքով՝

ԱԶԲ հայաստանյան գրասենյակի տնօրեն

Դոն Լամբերտ

Կից՝ Հատկացումների վերանայված աղյուսակ

Օրինակն ուղարկել՝ պրն. Գնել Սանոսյանին՝ նախարար, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)

պրն. Էդուարդ Հակոբյանին՝ նախարարի տեղակալ/ԱԶԲ կառավարչի տեղակալ, Ֆինանսների նախարարություն

տկն. Քրիստինե Ղալեչյանին՝ նախարարի տեղակալ, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն

պրն. Գոռ Ավետիսյանին՝ գործադիր տնօրեն, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

պրն. Չեն Չենին՝ տնօրեն, ՈԽ-ՏՐ

պրն. Մասահիրո Նիշիմուրային՝ բաժնի ղեկավար, Ծրագրի կառավարում, ՈԽ-ՏՐ

պրն. Լյուկ Ֆոխտմանին՝ երկրի գործառնությունների ղեկավար, Մշտական

առաքելություն Հայաստանում

պրն. Թոմաս Հերցին՝ տրանսպորտային հարցերով ավագ մասնագետ, ՌԽ-ՏՐ

պրն. Զայգհամ Նաքվիին՝ ծրագրի թիմի ղեկավար/ տրանսպորտային հարցերով ավագ մասնագետ, ՌԽ-ՏՐ

Հավելված

## ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿ

| Թիվ | Հոդված | Ընթացիկ հատկացում | Ավելացում/(նվազեցում) (եվրո) | Վերանայված հատկացում | Վարկային հաշվից առհանման հիմք |
|---|---|---|---|---|---|
| | | Կատեգորիա (եվրո) | | Կատեգորիա (եվրո) | |
| 1 | Աշխատանքներ եւ խորհրդատվական ծառայություններ | 35,376,000.00 | 2,500,000 | 37,876,000.00 | պահանջված ընդհանուր ծախսերի 100%-ը* |
| 2 | Ավելացող վարչական ծախսեր | 965,000.00 | 350,000.00 | 1,315,000.00 | պահանջված ընդհանուր ծախսերի 100%-ը* |
| 3 | Տոկոս եւ պարտավորավճար | 572,000.00 | 0.00 | 572,000.00 | Ստացման ենթակա գումարի 100%-ը* |
| 4 | Չբաշխված | 4,482,781.40 | (2,850,000.000) | 1,632,781.40 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **41,395,781.40** | **0.00** | **41,395,781.40** | |

* Առանց Վարկառուի երկրում կիրառվող հարկերի եւ տուրքերի:

**01/5-2/6368-2024**
**2024թ. մարտի 25**

**Ասիական զարգացման բանկի**
**ԱԶԲ հայաստանյան գրասենյակի տնօրեն**
**Պարոն Դոնալդ Լամբերտին**

**Թեմա: Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» - Վարկի փակման ժամկետի երրորդ երկարաձգում և վարկային միջոցների վերաբաշխում**

**Հարգելի պարոն Լամբերտ,**

Ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև շարունակական արդյունավետ համագործակցության համար:

Սույնով ցանկանում ենք տեղեկացնել, որ Ձեր՝ 2023թ. դեկտեմբերի 11-ի նամակը և սույն պատասխան գրությունը կազմում են «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրի փոփոխության համաձայնագիր, որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ ԱԶԲ ստանա Վարկառուի գրավոր ծանուցումը՝ վերջինիս ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ՀՀ օրենսդրությամբ պահաջվող բոլոր ներքին ընթացակարգերի ավարտի վերաբերյալ:

Ընդունեք, խնդրում եմ, երախտիքիս հավաստիքը:

**Հարգանքով,**

**Վահե Հովհաննիսյան**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» - վարկի փակման ժամկետի երրորդ երկարաձգում և վարկային միջոցների վերաբաշխում» նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**